մոկրատիկ և նրա սահմաններում հաւասար իրաւունքներ կը վայելեն նրա մէջ ապրող բոլոր ժողովուրդները։ Այն Հայաստանը, որ ստեղծւում է հայ աշխատաւորութեան ջանքերով, կարող է լինել միայն ազատութեան, լուսաւորութեան ու յառաջդիմութեան հայրենիք։

Կեցցէ՛ հայ աշխատաւոր ժողովուրդը։

Կեցցէ՛ ազատ և դեմոկրատիկ Հայաստանը։

Կեցցէ՛ աշխատաւորների միջազգային համերաշխութիւնը։

Վ. Մինախորեան. — (սոց.-յեղ.) Սոցիալիստ-յեղափոխական ֆրակցիայի կողմից կարդում է մի յայտարարութիւն Հայաստանի անկախութեան ճանաչման առթիւ, մատնանշելով, որ իրենց կուսակցութիւնը եռանդուն պայքար է մղում ժողովուրդների ինքորոշման համար։ Միւս կողմից, ընդգծում է, որ տաճկահայ դատի բաժանումը ռուսահայ դատից ամենամեծ դաւաճանութիւնն է հայ ժողովրդի հանդէպ*)։

Աղաբաբէկով. — (մուսուլմ.) Հայ ժողովրդի դարաւոր ձգտումը պսակւեց յաջողութեամբ. ճանաչւեց նրա անկախութիւնը և նա այսօրւանից մտնում է կուլտուրական ժողովուրդների ընտանիքի մէջ, որպէս ուրոյն կազմակերպութիւն։ Ողջունելով այս ակտը՝ ես կուզեմ մատնանշել, թէ որքան նշանակալից է այն անդրկովկասեան ժողովուրդների համերաշխութեան տեսակէտից. այսուհետև պէտք է մի կողմ թողնւեն վէճերն ու չովէն դաղափարները և խաղաղ աշխատանքը պիտի ծաղկի Անդրկովկասում, երեք ժողովուրդների համերաշխութեան հիման վրա։ Միւս կողմից, մեր անկախութիւնը, ինչպէս և Վրաստանինն ու Ադրբէջանինը, չեն կարող լինել հաստատուն, մինչև այն չճանաչւի նաև Ռուսաստանի կողմից. մեր բոլոր աշխատանքը պէտք է տանենք այն ուղղութեամբ, որ փոխադարձ համաձայնութեամբ Ռուսաստանն ևս հաստատէ այս ակտը։ Մաղթելով ամէն յաջողութիւն՝ ես կանչում եմ կեցցէ՛ անկախ Հայաստանը, կեցցէ՛ անդրկովկասեան ժողովուրդների եղբայրութիւնը։

Կ. Սասունի. — (դաշն.) Արարատեան աշխարհը իր դաւակներին ուղարկեց մեր հայրենիքը՝ Տաճկահայաստանը կուռելու և ազատագրելու մեզ. դէպքերն այնպէս դասաւորւեցին, որ մենք թողինք մեր հայրենիքը, եկանք Արարատեան աշխարհը և մեր դաւակներին ուղարկեցինք Սարդարապատ կուռելու և ազատագրելու ժողովուրդը օտարի լծից։

Մեր արիւնը խառնւեց ձերինին և արեան խառնումը վերացրեց մեր և ձեր միջև եղած սահմանները։ Այսօր բախտը ժպտում է Արարատեան աշխարհին, ուր ստեղծւեց ազատ Հայաստանի կորիզը։ Անսահման հիացմունքով ենք լսում այդ աւետիքը, որովհետև այժմ, թէպէտ դաղթական, մենք երջանիկ ենք, որ հարազատ հողի վրա ենք ու սեփական երկնքի տակ։ Մենք երբե՛ք չենք տխրում ու սգոյ արձաններ չենք տեսնում. սա առաջին մեծ դործն էր, որ կատարւեց. այնուհետև կը դայ միւսը՝ Տաճկահայաստանի ազատագրումը։ Դաղթական դարձած ժողովուրդը, որ իր կրծքի տակ ունի մեծ փոթորիկ, դուսպ ու լուռ սպասում է իր պայքարի վախճանին։ Նա համոզուած է, որ կը դայ այդ օրը, կը յաղթանակէ արդարութիւնը և ինքը կրկին ստիպւած չի լինի կուի դուրս դալ։ Իսկ եթէ չդայ այն արդարութիւնը, այն ժամանակ անսահման կը լինի նրա ցասումն ու անսպառ՝ ուժը,

*) Ցաւում ենք, որ Վ. Մինախորեանի ճառը ի վիճակի չենք առաջ բերելու ամբողջութեամբ. մեր ձեռքի տակ եղած աղբիւրի մէջ նա տրւած է ա՛յսչափ։